

## Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի հարցաշար - 2020 թ.

### Տևողությունը 150 րոպե

#### 10-րդ դասարան

Մի մարդ կեսօրին ծովափով անցնելիս հանդիպեց **արևատ** դեմքով, **գիսախոիվ** մի պատանու՝ **վտիտ** կազմվածքով: Վերջինս փութաջանորեն հավաքում էր ավազներից վիստացող ծովային աստղիկները և մեկը մյուսի հետևից նետում էր ծովը:

– Ինչո՞ւ ես ջուրը զցում աստղիկները, – տարակուսանքով հարցրեց անծանոթը:

– Մինչև այգաբաց, երբ սկսվում է **տեղաստվությունը**, առանց ջրի շնչահեղձ կլինեն. պետք է անհապաղ փրկել, – **անխոնջ** եռանդով շարունակելով իր գործը՝ պատասխանեց պատանին **աներկբայելի** ձայնով:

– Բայց դա խելացնոր միտք է, **անհեթեթություն**, – բացականչեց մարդը. – նայի՛ր. ծովափը ծածկված է բյուրավոր աստղիկներով: Մի՞ թե կարծում ես՝ կհաջողվի փրկել բոլորին: Չուր ես քեզ տանջում. ոչինչ չես փոխի:

Տղան **անբարբառ** պարզեց ափերի մեջ խլտացող փոքրիկ կենդանուն, **անսքող արգահատանքով** շրջեց գլուխն ու հեռացավ:

Մարդը մի պահ կարկամեց պատանու հայացքից: Քիչ անց համրաքայլ մոտեցավ, կանգնեց տղայի կողքին, կռացավ, վերցրեց մի աստղիկ, զցեց ծովը, հետո ևս մեկը...

Ուշ երեկոյան ծովափին...

Իսկ երբ հորիզոնին երևացին արևի առաջին շողերը, ....

1. Շարունակի՛ր վերջին երկու անավարտ մտքերը: Մեկնաբանի՛ր առակի իմաստը 2-3 նախադասությամբ: (4 միավոր)
2. Բնութագրի՛ր տղային 1-2 նախադասությամբ: (1 միավոր)
3. Գրի՛ր ընդգծված բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
4. Գրի՛ր *կարկամել* բառի իմաստն արտահայտող երկու դարձվածք: (1 միավոր)
5. Գրի՛ր *տքնանք*, *առնչվել* բառերի անհնչյունափոխ արմատները և դրանցով կազմի՛ր երկուական բարդ կամ ածանցավոր բառ: (2 միավոր)
6. Տեքստից ընտրի՛ր բառային և քերականական համանուն ունեցող երկուական բառ, կազմի՛ր բառագույգերը (կամ եռյակները) և բացատրի՛ր: (2 միավոր)
7. Բառախմբից առանձնացրո՛ւ այն բառերը, որոնք կարող են բառակապակցություն կազմել կամ գործածվել *հայացք* բառի հետ. մռայլադեմ, դժխեմ, դյուրին, բացակա, խստակյաց, կաթոզին, ազնվագարմ,անքույթ, վարանոտ, դալկադեմ, ծավի, ակներև, խանդակաթ, քստմնելի, բարվոք, լուսաշող, մտացածին, կայծակնացայտ, ոխակալ, անլուր: (2 միավոր)
8. Մեկնաբանի՛ր «Եթե ուզում ես ծիածան տեսնել, դիմացի՛ր անձրևին» թևավոր խոսքը: (1 միավոր)
9. Գրի՛ր շարադրություն «Հայաստան ասելիս...» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)